COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

Ստրասբուրգ, 1 հոկտեմբերի 2021 թվականի MIN-LANG(2021)17

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԱՄ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽԱՐՏԻԱ

ՀԱՅԱՍՏԱՆԻ վերաբերյալ Փորձագետների կոմիտեի հինգերորդ գնահատման զեկույցում ներկայացված՝ անհապաղ գործողություններ ձեռնարկելու մասին հանձնարարականների իրականացման վերաբերյալ փորձագետների կոմիտեի գնահատականը

Ներածություն

1. Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների վերաբերյալ եվրոպական խարտիան (այսուհետ՝ Խարտիա) Եվրոպայի խորհրդի պայմանագիր է, որով դրա կողմ հանդիսացող պետությունների վրա պարտավորություններ են դրվում պաշտպանելու երկրում ավանդաբար ապրող ազգային փոքրամասնությունների լեզուները եւ նպաստելու դրանց խթանմանը հանրային կյանքի բոլոր ոլորտներում՝ կրթություն, դատական մարմիններ, վարչական մարմիններ եւ հանրային ծառայություններ, լրատվություն, մշակութային գործունեություն եւ հաստատություններ, տնտեսական եւ հասարակական կյանք, միջպետական փոխանակումներ: Խարտիան վավերացվել

է Հայաստանի կողմից 2002 թվականի հունվարի 25-ին, ուժի մեջ է մտել 2002 թվականի մայիսի 1-ին եւ կիրառվում է հետեւյալ լեզուների նկատմամբ՝ ասորերեն (անդրադարձ է կատարվում II եւ III մասերում), գերմաներեն (II մասում), հունարեն (II եւ III մասերում), քրդերեն (II եւ III մասերում), ռուսերեն (II եւ III մասերում), ուկրաիներեն (II մասում), եզդիերեն (II եւ III մասերում):

2. Փորձագետների կոմիտեն վերահսկում է Խարտիայի իրականացումը: Յուրաքանչյուր Կողմ պետություն Խարտիայի իրականացման վերաբերյալ պարբերական զեկույց է ներկայացնում յուրաքանչյուր հինգ տարին մեկ անգամ: Հիմք ընդունելով պարբերական զեկույցը՝ Փորձագետների կոմիտեն ընդունում է գնահատման զեկույց, որում ներկայացվում են տվյալ երկրում տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների պաշտպանությանն ու դրանց խթանմանը նպաստելուն ուղղված «անհապաղ գործողություններ ձեռնարկելու մասին հանձնարարականներ» եւ «լրացուցիչ հանձնարարականներ»: Հիմք ընդունելով սույն գնահատման զեկույցը՝ Նախարարների կոմիտեն Կողմ պետության համար ընդունում է հանձնարարականներ:

3. Պարբերական զեկույցը ներկայացնելու օրվանից երկուսուկես տարի հետո Կողմ պետությունը Փորձագետների կոմիտեի կողմից իր գնահատման զեկույցում ներկայացված անհապաղ գործողությունը ձեռնարկելու վերաբերյալ յուրաքանչյուր հանձնարարականի[1] իրականացման մասին տեղեկություններ է տրամադրում: Այնուհետեւ Փորձագետների կոմիտեն ընդունում է այդ հանձնարարականների իրականացման վերաբերյալ գնահատում: Փորձագետների կոմիտեի «լրացուցիչ հանձնարարականները» ուսումնասիրվում են հաջորդ պարբերական զեկույցն ստանալուց եւ Կողմ պետություն կատարած այցից հետո: Հինգ տարին մեկ ներկայացվող պարբերական զեկույցները Խարտիայի շրջանակներում ստանձնած բոլոր պարտավորությունների եւ Փորձագետների կոմիտեի եւ Նախարարների կոմիտեի կողմից ներկայացված բոլոր

[1] Նախարարների կոմիտեի «Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների վերաբերյալ եվրոպական խարտիայի վերահսկողության մեխանիզմի ամրապնդման» վերաբերյալ որոշումների (CM/Del/Dec(2018)1330/10.4e), համաձայն, 1 ա կետ:

հանձնարարականների իրականացման վերաբերյալ համապարփակ տեղեկատվություն են պարունակում:

4. Նախարարների կոմիտեի կողմից 2018 թվականի նոյեմբերին որոշված՝ պարբերական զեկույցների ներկայացման ամսաթվերը նկատի ունենալով[2]՝ ակնկալվում էր, որ Հայաստանը մինչեւ 2021 թվականի մայիսի 1-ը **տեղեկություններ** կներկայացնի Փորձագետների կոմիտեի 5-րդ գնահատման զեկույցում[3] ներկայացված **անհապաղ գործողություններ ձեռնարկելու մասին հանձնարարականների իրականացման վերաբերյալ**: Հայաստանն այդ տեղեկությունները ներկայացրել է 2021 թվականի մայիսի 27-ին: **Անհապաղ գործողություն ձեռնարկելու մասին հանձնարարականների իրականացման** այս **գնահատումը** կատարվել է Հայաստանի իշխանություններից, ինչպես նաեւ տվյալ լեզուներով խոսող փոքրամասնությունների ներկայացուցիչներից ստացված տեղեկությունների հիման վրա՝ Խարտիայի 16.2-րդ հոդվածի համաձայն[4]: Ինչ վերաբերում է Խարտիայի շրջանակներում ստանձնած իր բոլոր պարտավորություններին Հայաստանի համապատասխանությանը, Փորձագետների կոմիտեն հղում է անում իր հինգերորդ գնահատման զեկույցին: Փորձագետների կոմիտեն հաջորդ գնահատման զեկույցում կուսումնասիրի բոլոր փոքրամասնությունների լեզուների մասով ստանձնած բոլոր պարտավորությունների իրականացումը:

5. Սույն գնահատումը Փորձագետների կոմիտեի կողմից ընդունվել է 2021 թվականի հոկտեմբերի 1-ին:

---

[2] CM/Del/Dec(2018)1330/10.4e, Հավելված:

[3] Հայաստանում «Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների մասին» եվրոպական խարտիայի կիրառման վերաբերյալ Փորձագետների կոմիտեի հինգերորդ գնահատման զեկույց (MIN-LANG (2020) 3):

[4] Փորձագետների կոմիտեի կանոնակարգերի համաձայն (MIN-LANG(2019)7), 17-րդ կանոն, 1-6-րդ կետեր:

Անհապաղ գործողություն ձեռնարկելու մասին հանձնարարականների՝ Հայաստանի կողմից իրականացման ուսումնասիրությունը

I. Ընդհանուր հարցերը

6. Փորձագետների կոմիտեն իր երախտագիտությունն է հայտնում Հայաստանի իշխանություններին՝ անկախ 2020 թվականի զինված հակամարտության հետեւանքներից եւ առաջացած մարտահրավերներից՝ անհապաղ գործողություն ձեռնարկելու մասին հանձնարարականների իրականացման վերաբերյալ իրենց տեղեկությունները ներկայացնելու համար:

Կրթական բարեփոխումներ

7. Իշխանությունները Փորձագետների կոմիտեին տեղեկացրել են կրթության ոլորտում ընթացիկ բարեփոխման մասին, որը կարող է դրական ազդել փոքրամասնությունների լեզուների դասավանդման վրա: Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունում ստեղծվել է Կրթության զարգացման եւ նորարարությունների ազգային կենտրոն, որը 2021-2022 թվականներին, ի թիվս այլնի, ձեռնամուխ կլինի ուսուցիչների վերապատրաստման եւ ատեստավորման արդիականացված գործընթացներ սկսելուն: Որպես բարեփոխման մաս, ուսուցիչների, այդ թվում՝ փոքրամասնության լեզուները դասավանդող ուսուցիչների հետագա վերապատրաստումներն ավելի հաճախակի կդառնան: Բացի այդ, կավելացվեն գերմաներենի եւ ռուսերենի՝ որպես օտար լեզուների դասավանդման ժամերը՝ շաբաթական երկու դասաժամից դառնալով երեք: Փորձագետների կոմիտեն նշում է, որ այս միջոցները ձեռնարկվել են վերահսկողության հինգերորդ փուլում ներկայացված դիտողությունների եւ հանձնարարականների առնչությամբ[5], եւ ողջունում է դրանք: Այն ակնկալում է

[5] Տե՛ս «Հայաստանում տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների մասին» եվրոպական խարտիայի կիրառման վերաբերյալ Փորձագետների կոմիտեի հինգերորդ գնահատման զեկույցը (MIN-LANG (2019) 17 վերջնական), 20-րդ, 23-րդ կետեր, Նախարարների կոմիտեի CM/RecChL(2020)6 հանձնարարականը «տարրական եւ միջնակարգ կրթական ծրագրում բարելավել փոքրամասնությունների լեզուների դասավանդումը՝ շաբաթական դասաժամերի քանակը ավելացնելու, ուսուցիչների վերապատրաստումը խթանելու եւ դասավանդման ժամանակակից նյութեր պատրաստելու միջոցով»:

հաջորդ պարբերական զեկույցում տեղեկություններ ստանալ դրանց իրականացման վերաբերյալ:

Կորոնավիրուսի (COVID-19) համավարակի ժամանակ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների օգտագործումը

8. 2020 թվականին Փորձագետների կոմիտեն մտահոգություն է հայտնել մի քանի Կողմ պետություններում տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով կորոնավիրուսի (COVID-19) համավարակի վերաբերյալ պաշտոնական տեղեկությունների եւ հաղորդումների համատարած բացակայության վերաբերյալ: Ընդգծվել է, որ Խարտիայի համաձայն՝ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները պետք է օգտագործվեն հանրային կյանքի բոլոր ոլորտներում, ուստի իշխանությունները պետք է նաեւ ակտիվորեն օգտագործեն այդ լեզուները համավարակի դեմ իրենց պայքարում: Մասնավորապես անհրաժեշտ է հիշել, որ կորոնավիրուսային հիվանդություն (COVID-19) ունեցող հիվանդներն իրենց ավելի մեկուսացված կզգային, եթե նրանք ի վիճակի չլինեին հաղորդակցվել բժշկական անձնակազմի հետ իրենց լեզվով[6]: Այս համատեքստում Փորձագետների կոմիտեն որոշել է իր հետագա գնահատումներում եւ զեկույցներում անդրադառնալ համավարակի ազդեցությանը:

9. Հայաստանի իշխանությունները Փորձագետների կոմիտեին տեղեկացրել են փոքրամասնությունների լեզուների խթանման գործընթացի վրա համավարակի ազդեցության մասին: 2020 թվականին Հայաստանը որոշել է ազգային փոքրամասնություններին տարեկան հատկացվող պետական բյուջեն ավելացնել 5 միլիոն դրամով (8 750 եվրո[7]): Սակայն, պայմանավորված 2020 թվականի համավարակով եւ զինված հակամարտությամբ, այս ծրագրի իրականացումը հետաձգվել է: Ավելին, համավարակն ազդել է ազգային

[6] Տե՛ս «Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով հաղորդակցության խիստ կարեւորությունը համաշխարհային բժշկական ճգնաժամի պայմաններում», 2020 թվականի մարտի 25:

[7] 2021 թվականի օգոստոսի 24-ի դրությամբ սահմանված արտարժույթի փոխարժեքով:

փոքրամասնությունների կիրակնօրյա դպրոցների[8] աշխատանքի վրա, որոնք ստիպված են եղել, օրինակ, կազմակերպել փոքրամասնության լեզվի առցանց դասընթացներ: Փորձագետների կոմիտեն իշխանություններին շնորհակալություն է հայտնում այս տեղեկությունների համար եւ առաջարկում իրենց հաջորդ պարբերական զեկույցում կորոնավիրուսի (COVID-19) համավարակի ժամանակ ձեռնարկված որոշակի միջոցառումների համատեքստում փոքրամասնությունների լեզուների օգտագործման վերաբերյալ ներառել համապարփակ տեղեկատվություն:

Փոքրամասնությունների լեզուներն օգտագործող համայնքների ներկայացուցիչների հետ խորհրդակցությունը

10. Հայաստանի իշխանությունները տեղեկություններ չեն տրամադրել այն մասին, թե արդյոք նրանք փոքրամասնությունների լեզուներն օգտագործող համայնքների ներկայացուցիչների հետ խորհրդակցել են անհապաղ գործողություններ ձեռնարկելու վերաբերյալ Փորձագետների կոմիտեի հանձնարարականների շուրջ: Փորձագետների կոմիտեն վերահաստատում է, որ Խարտիայի 6-րդ եւ 7.4 հոդվածներին համապատասխան՝ անհրաժեշտ է անհապաղ գործողություն ձեռնարկելու մասին հանձնարարականների իրականացման վերաբերյալ տեղեկատվական փաստաթղթում ներառել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներն օգտագործողների տեսակետները[9]:

---

[8] Կիրակնօրյա դպրոցներն ազգային փոքրամասնությունների կողմից կառավարվող հաստատություններ են, որտեղ, *ի թիվս այլնի*, դասավանդվում են փոքրամասնությունների լեզուները: Իշխանություններից ստացած աջակցությամբ նրանք լրացնում են տարրական եւ միջնակարգ կրթական ծրագրում փոքրամասնությունների լեզուների դասավանդումը եւ ապահովում մեծահասակների կամ շարունակական կրթություն:

[9] Տե՛ս, օրինակ, Սլովենիայի կողմից անհապաղ գործողություն ձեռնարկելու մասին հանձնարարականների իրականացման վերաբերյալ Փորձագետների կոմիտեի գնահատումը (MIN-LANG (2021) 11), 8-րդ կետ, Միացյալ թագավորության եւ Մեն կղզու կողմից անհապաղ գործողություն ձեռնարկելու մասին հանձնարարականների իրականացման վերաբերյալ Փորձագետների կոմիտեի գնահատումը (MIN-LANG (2021) 3), 7-րդ կետ, Հունգարիայի կողմից անհապաղ գործողություն ձեռնարկելու մասին հանձնարարականների իրականացման վերաբերյալ Փորձագետների կոմիտեի գնահատումը (MIN-LANG (2020) 14), 6-րդ կետ:

II. Անհապաղ գործողություն ձեռնարկելու մասին հանձնարարականները

1. Ասորերեն

Անհապաղ գործողություն ձեռնարկելու մասին հանձնարարական

ա) Նպաստել նախադպրոցական կրթության առնվազն զգալի մասի ապահովմանն ասորերենով եւ տեղեկություններ տրամադրել տարրական եւ միջնակարգ կրթական ծրագրերում ասորերենով (ասորերենի) դասավանդման մասին:

Հայաստանի իշխանությունների կողմից ձեռնարկված գործնական միջոցառումները

11. 2020 թվականի մայիսի 6-ին «Նախադպրոցական կրթության մասին» օրենքի ընդունմամբ Հայաստանը ստեղծել է փոքրամասնությունների լեզուներով նախադպրոցական կրթության ապահովման իրավական հիմք: Ըստ Հայաստանի իշխանությունների՝ ներկայումս որեւէ երեխա ասորերենով նախադպրոցական կրթություն չի ստանում: Այնուամենայնիվ, Փորձագետների կոմիտեն տեղյակ է, որ Վերին Դվինում (Արարատի մարզ) գործում է մասնավոր մանկապարտեզ, որտեղ ասորերեն լեզուն օգտագործվում է որոշ չափով, սակայն չի հասնում այնպիսի մակարդակի, որ նախադպրոցական կրթության զգալի մաս կազմի:

12. 2020-2021 ուսումնական տարում Արարատի եւ Կոտայքի մարզերի հանրակրթական դպրոցների ուսումնական ծրագրի շրջանակներում ասորերեն լեզու եւ գրականություն է սովորել 311 աշակերտ: Իշխանությունները չեն հստակեցրել՝ այդ «հանրակրթական դպրոցները» եղել են տարրական թե միջնակարգ, թե՝ երկուսն էլ:

Փորձագետների կոմիտեի գնահատականը եւ լրացուցիչ գործողությունների անհրաժեշտությունը

13. Հաշվի առնելով այն փաստը, որ երեխայի մոտ լեզու սովորելու գործընթացն սկսվում է շատ վաղ տարիքից, Փորձագետների կոմիտեն ընդգծում է փոքրամասնությունների լեզուները սովորելու համար մանկապարտեզների կարեւորությունը: 8.1 (ա) (iv) հոդվածով ստանձնած պարտավորությունը կատարելու համար անհրաժեշտ է, որ պետական իշխանության մարմինները, համագործակցելով համապատասխան տեղական իշխանությունների հետ, «նպաստեն եւ (կամ) խրախուսեն» ավանդաբար ասորախոս բնակչությամբ բնակեցված տարբեր համայնքներում նախադպրոցական կրթության առնվազն զգալի մասի ասորերենով ապահովմանը: Բացի այդ, պետական իշխանության մարմինները, համագործակցելով տեղական իշխանությունների եւ ասորախոսող համայնքի ներկայացուցիչների հետ, պետք է ծնողներին տեղեկացնեն ասորերենով նախադպրոցական կրթության առաջարկի մասին եւ ակտիվորեն խրախուսեն, որ վերջիններս իրենց երեխաներին տանեն համապատասխան մանկապարտեզներ:

14. Ինչ վերաբերում է տարրական եւ միջնակարգ կրթությանը, ապա պարզ չէ, թե վերոնշյալ 311 աշակերտներից քանիսն են հաճախել տարրական եւ քանիսը՝ միջնակարգ դպրոց: Փորձագետների կոմիտեն դիմում է իշխանություններին հաջորդ պարբերական զեկույցում կրթության այս մակարդակներից յուրաքանչյուրում աշակերտների թվի վերաբերյալ թարմացված տեղեկություններ տրամադրելու խնդրանքով, որպեսզի կարողանա համապատասխանաբար 8.1 (բ) (iv) եւ 8.1 (գ) (iv) հոդվածների կատարման վերաբերյալ եզրակացություններ անել:

Անհապաղ գործողություններ ձեռնարկելու մասին հանձնարարական

բ) Ասորերենով կանոնավոր եւ բավականաչափ երկար տեւողությամբ հանրային հեռուստատեսային հաղորդում հեռարձակել:

Հայաստանի իշխանությունների կողմից ձեռնարկված գործնական միջոցառումները

15. Ըստ իշխանությունների՝ Հայաստանի հանրային հեռուստաընկերությունը նախատեսում է գործարկել երկրորդ շուրջօրյա հանրային ալիքը, որը 2022 թվականի մարտ ամսից նույնպես ասորերենով ծրագիր է հեռարձակելու (15 րոպե տեւողությամբ յուրաքանչյուր կիրակի): Ծրագրում պետք է անդրադարձ կատարվի ասորի փոքրամասնությունների վերաբերյալ տեղեկություններին, նորություններին, ինչպես նաեւ ավանդույթներին, պատմությանը, կրթությանը, մշակութային ժառանգությանը եւ լեզվին: Այն նախատեսված կլինի բոլոր տարիքային խմբերի համար եւ հասանելի կլինի նաեւ հանրային հեռուստաընկերության յութուբյան էջում[10]:

Փորձագետների կոմիտեի գնահատումը եւ լրացուցիչ գործողությունների անհրաժեշտությունը

16. Փոքրամասնությունների լեզվով հեռուստատեսային հաղորդումները հատկապես կարեւոր են լեզվի խթանման գործընթացի համար: Դրանք ոչ միայն տեղեկություններ են տրամադրում փոքրամասնության լեզվով, այլ նաեւ ընտանիքում եւ (կամ) դպրոցում լեզվի օգտագործմանը զուգահեռ բարձրացնում են դրա միջավայրում լինելու հնարավորությունը: Սա նպաստում է լեզվի ուսուցմանը կամ գործնականում կիրառմանը եւ դրա զարգացմանը, ինչը հատկապես տեղին է ոչ այնքան տարածված լեզուների դեպքում, ինչպիսին ասորերենն է: Փոքրամասնությունների լեզվով հեռուստատեսային հաղորդումները նաեւ

[10] www.youtube.com/channel/UCSnr4wFDHDZZMeeHQvaHpjA

բարձրացնում են լեզվի հեղինակությունն ու ֆունկցիոնալությունը, ինչը կարող է խթան հանդիսանալ, որպեսզի մարդիկ սովորեն կամ փոխանցեն այն: Հետեւաբար 11.1(ա) (iii) հոդվածն իրականացնելու համար անհրաժեշտ է, որ ծրագիրը հեռարձակվի համապատասխան տեւողությամբ, պարբերականությամբ եւ հասանելի լինի, ինչին կարող է նպաստել համացանցը: Լեզվակիրների խմբի համար լիարժեք հասանելիություն ապահովելու նպատակով հեռարձակվող հաղորդումները պետք է ունենան տարբեր ժանրային բովանդակություն, օրինակ՝ տեղական եւ ազգային նորություններ, ժամանց եւ մշակույթ, եւ նախատեսված լինեն տարբեր սերունդների ներկայացուցիչների, այդ թվում՝ երեխաների եւ երիտասարդների համար՝ նկատի ունենալով լեզվի փոխանցման անհրաժեշտությունը[11]:

17. Այս ամենը հաշվի առնելով՝ Փորձագետների կոմիտեն ողջունում է հանրային հեռուստատեսությամբ ասորերենով ծրագիր սկսելու մտադրությունը, որով անդրադարձ կկատարվի տարբեր թեմաների, այն նախատեսված կլինի բոլոր տարիքային խմբերի համար եւ հասանելի կլինի նաեւ համացանցում: Միեւնույն ժամանակ Փորձագետների կոմիտեն նշում է, որ հեռարձակման համար նախատեսված ընդամենը 15 րոպե տեւողությունը եւ հեռարձակման շաբաթական պարբերականությունը բավարար չեն ասորերենի խթանման գործում արդյունավետ ներդրում ունենալու համար: Հետեւաբար, հաշվի առնելով անհապաղ գործողություն ձեռնարկելու մասին իր հանձնարարականը, Փորձագետների կոմիտեն իշխանություններին առաջարկում է ասորերենով հեռուստահաղորդումն ավելի հաճախակի հեռարձակել եւ դրա տեւողությունն ավելացնել:

[11] Տե՛ս, ի թիվս այլնի, Փորձագետների կոմիտեի՝ Հայաստանի վերաբերյալ հինգերորդ գնահատման զեկույցը MIN-LANG (2020) 3, 49-րդ կետ:

Անհապաղ գործողություն ձեռնարկելու մասին հանձնարարական

գ) Խրախուսել ասորերենով տեղանունների օգտագործումը կամ օբյեկտների անվանակոչումը՝ այդ լեզվի գրությանը եւ ուղղագրությանը համապատասխան:

Հայաստանի իշխանությունների կողմից ձեռնարկված գործնական միջոցառումները

18. Իշխանությունները հղում են կատարում «Աշխարհագրական անվանումների մասին» օրենքին, համաձայն որի՝ աշխարհագրական օբյեկտների անվանակոչումը կատարվում է՝ հաշվի առնելով, ի թիվս այլնի, «[տվյալ] վայրի պատմական, մշակութային [եւ] ազգագրական... պայմանները» (Հոդված 4.2): Աշխարհագրական օբյեկտների անվանակոչման եւ անվանափոխման մասին առաջարկություններ կարող են անել պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինները, հասարակական կազմակերպությունները, ինչպես նաեւ իրավաբանական եւ ֆիզիկական անձինք (Հոդված 6): Ըստ իշխանությունների՝ ասորախոս բնակչություն ունեցող համայնքներում տեղանունները փոխելու առաջարկություն հաշվետու ժամանակահատվածում չի արվել:

Փորձագետների կոմիտեի գնահատումը եւ լրացուցիչ գործողությունների անհրաժեշտությունը

19. Փորձագետների կոմիտեն նշում է, որ Խարտիան վավերացնելիս Հայաստանը, ի թիվս այլնի, ընտրել է 10.2 (է) հոդվածով նախատեսված պարտավորությունը, համաձայն որի՝ «Կողմերը պարտավորվում են թույլատրել եւ (կամ) խրախուսել ... անհրաժեշտության դեպքում՝ տեղանունների ճշգրիտ կամ ավանդական ձեւերի կիրառումը կամ ընդունումը տարածաշրջանային եւ փոքրամասնությունների լեզուներով՝ պաշտոնական լեզվով (լեզուներով) ընդունված անունների հետ միասին»: Սույն պարտավորությունն իրականացնելու նպատակով ակնկալվում է, որ պետական իշխանության մարմինները դրական

քայլեր կձեռնարկեն՝ շահագրգիռ տեղական իշխանություններին տեղեկացնելով այդ պարտավորության մասին եւ խրախուսելով նրանց տեղանուններ ընդունել ասորերենով: Համաձայն «Աշխարհագրական անվանումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի՝ աշխարհագրական օբյեկտների անվանակոչման մասին առաջարկություններ կարող են անել նաեւ հենց պետական իշխանության մարմինները: Հաշվի առնելով, որ պետական իշխանության մարմինները միջազգային իրավունքով պատասխանատու են Հայաստանի ստանձնած պարտավորությունների կատարման համար՝ կատարումը չպետք է կախված լինի տեղական իշխանությունների կամ այլ շահագրգիռ կողմերի նախաձեռնությունից:

20. Հետեւաբար Փորձագետների կոմիտեն վերահաստատում է հինգերորդ գնահատման զեկույցում ներկայացված իր այն դիտողությունը, որ «Հայաստանի պետական իշխանության մարմինները [պետք է] դիմեն համապատասխան համայնքներին, խրախուսեն նրանց տեղանուններ ընդունել տեղի ազգային փոքրամասնությունների լեզուներով կամ կրկին ընդունել ոչ վաղ անցյալում կիրառությունից հանված տեղանունները եւ ֆինանսավորման հատուկ ծրագրի միջոցով աջակցեն այդ միջոցառումների իրականացմանը»[12]:

2. Գերմաներեն

Անհապաղ գործողություն ձեռնարկելու մասին հանձնարարական

ա) Ընդլայնել գերմանացի փոքրամասնությունների կիրակնօրյա դպրոցին տրամադրվող աջակցությունը, այդ թվում՝ գերմաներենով ժամանակակից ուսումնական նյութեր տրամադրելու միջոցով:

[12] Փորձագետների կոմիտեի՝ Հայաստանի վերաբերյալ հինգերորդ գնահատման զեկույց MIN-LANG (2020) 3, 42-րդ կետ:

Հայաստանի իշխանությունների կողմից ձեռնարկված գործնական միջոցառումները

21. Ինչպես արդեն նշվել է (9-րդ կետ), 2020 թվականին իշխանությունները որոշել են ազգային փոքրամասնություններին տարեկան հատկացվող բյուջեն ավելացնել 5 միլիոն դրամով (8 750 եվրո[13]): Այս ծրագրի իրականացումն ընթացքի մեջ է:

22. Գերմաներենի դասավանդման համար օգտագործվող ուսումնական նյութերը լեզվական առումով հաջող չեն, իսկ մեթոդաբանության տեսանկյունից հնացած են[14]: Քանի որ Հայաստանում նոր ուսումնական նյութերի հրատարակումը ժամանակ է պահանջում, գերմանախոս համայնքի ներկայացուցիչները գտնում են, որ այդ թերությունն անհապաղ կարող է շտկվել Գերմանիայից ուսումնական նյութերի լիցենզավորման ու դրանց օգտագործման եղանակով:

Փորձագետների կոմիտեի գնահատումը եւ լրացուցիչ գործողությունների անհրաժեշտությունը

23. Փորձագետների կոմիտեն ողջունում է այն փաստը, որ իշխանությունները որոշել են ավելացնել ազգային փոքրամասնություններին հատկացվող բյուջեն: Այն նշում է, որ այդ լրացուցիչ բյուջեն նույնպես կարող է օգտագործվել գերմանացի փոքրամասնությունների կիրակնօրյա դպրոցի կողմից կազմակերպվող լեզվի դասընթացներին տրամադրվող աջակցությունն ընդլայնելու համար: Հաշվի առնելով այդ դասընթացների աճող պահանջարկը[15] ՝ իշխանություններին առաջարկվել է ավելացնել բյուջեն:

24. Ինչպես նշվել է հինգերորդ գնահատման զեկույցում, կրթության բոլոր մակարդակների համար անհրաժեշտ է մշակել գերմաներենով ժամանակակից ուսումնական նյութեր եւ ուսուցչի ձեռնարկներ՝ բարելավելով լեզվի որակը եւ նպաստելով սովորողների կողմնորոշմանը (մեթոդներ, համապատասխանեցված

[13] 2021 թվականի օգոստոսի 24-ի դրությամբ սահմանված արտարժույթի փոխարժեքով:
[14] Փորձագետների կոմիտեի՝ Հայաստանի վերաբերյալ հինգերորդ գնահատման զեկույց MIN-LANG (2020) 3, 23-րդ կետ:
[15] Փորձագետների կոմիտեի՝ Հայաստանի վերաբերյալ հինգերորդ գնահատման զեկույց MIN-LANG (2020) 3, 21-րդ կետ:

թեմաներ եւ տեքստեր, աշակերտների կարիքներ)[16]: Ժամանակակից մեթոդներով լեզուների դասավանդմանն աջակցելու համար իշխանություններին առաջարկվում է սկսել վերոնշյալ ուսումնական նյութերի մշակման գործընթացը եւ դիտարկել Գերմանիայից ստացվող ուսումնական նյութերի առնվազն միջանկյալ լիցենզավորման հարցը:

3. Հունարեն

Անհապաղ գործողություն ձեռնարկելու մասին հանձնարարական

ա) Նպաստել նախադպրոցական կրթության առնվազն զգալի մասի ապահովմանը հունարենով եւ դասավանդել հունարեն որպես տարրական եւ միջնակարգ կրթության ուսումնական ծրագրի անբաժանելի մաս:

25. Իշխանությունները հաստատում են, որ նախադպրոցական, տարրական կամ միջնակարգ հիմնական (հանրակրթական) կրթական ծրագրերով հունարեն չի դասավանդվում:

Փորձագետների կոմիտեի գնահատումը եւ լրացուցիչ գործողությունների անհրաժեշտությունը

26. Փորձագետների կոմիտեն ափսոսանք է հայտնում է, որ Հայաստանում բացի մասնագիտական կրթական ծրագրերից (Երեւանի զբոսաշրջության, սպասարկման եւ սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջ), հունարենը դեռեւս չի դասավանդվում հիմնական կրթական ծրագրի շրջանակներում: Այնուամենայնիվ, հունախոս բնակչությամբ համայնքի ներկայացուցիչները Փորձագետների կոմիտեին տեղեկացրել են, որ ցանկանում են վերականգնել հունարենի դասավանդումը Երեւանի 12-րդ կամ 74-րդ դպրոցում, որտեղ նախկինում հունարեն է դասավանդվել:

27. Փորձագետների կոմիտեն իշխանություններին առաջարկում է

[16] Փորձագետների կոմիտեի՝ Հայաստանի վերաբերյալ հինգերորդ գնահատման զեկույց MIN-LANG (2020) 3, 23-րդ կետ:

խորհրդակցել հունախոս բնակչությամբ համայնքի ներկայացուցիչների հետ, օրինակ, Երեւանում հիմնական նախադպրոցական կրթության առնվազն զգալի մասը հունարենով ապահովելուն նպաստելու եւ հունարենը որպես տարրական եւ միջնակարգ կրթության ուսումնական ծրագրի անբաժանելի մաս դասավանդելու ուղիների մասին:

Անհապաղ գործողություններ ձեռնարկելու մասին հանձնարարական

բ) Հունարենով կանոնավոր եւ բավականաչափ երկար տեւողությամբ հանրային հեռուստատեսային հաղորդում հեռարձակել:

Հայաստանի իշխանությունների կողմից ձեռնարկված գործնական միջոցառումները

28. Հայաստանի հանրային հեռուստաընկերությունը նախատեսում է 2022 թվականի մարտ ամսից հեռարձակել ծրագիր հունարենով (յուրաքանչյուր կիրակի 15 րոպե տեւողությամբ), որը ենթադրաբար կլինի ասորերենով ծրագրի ձեւաչափով (տե՛ս 15-րդ կետը):

Փորձագետների կոմիտեի գնահատումը եւ լրացուցիչ գործողությունների անհրաժեշտությունը

29. Փորձագետների կոմիտեն հղում է կատարում փոքրամասնությունների լեզուներով հեռուստատեսային հաղորդումների կարեւորության վերաբերյալ իր հիմնական դիտողություններին (տե՛ս 16-րդ կետը): Հետեւաբար վերջինս ողջունում է հանրային հեռուստատեսությամբ հունարենով ծրագիր սկսելու մտադրությունը, որով անդրադարձ կկատարվի տարբեր թեմաների, այն նախատեսված կլինի բոլոր տարիքային խմբերի համար եւ հասանելի կլինի նաեւ համացանցում: Միեւնույն ժամանակ Փորձագետների կոմիտեն նշում է, որ հեռարձակման համար նախատեսված ընդամենը 15 րոպե տեւողությունը եւ հեռարձակման շաբաթական պարբերականությունը բավարար չեն հունարենի խթանման գործում արդյունավետ ներդրում ունենալու համար:

30. Հետեւաբար, հաշվի առնելով անհապաղ գործողություն ձեռնարկելու

մասին իր հանձնարարականը, Փորձագետների կոմիտեն իշխանություններին առաջարկում է հունարենով հեռուստահաղորդումն ավելի հաճախակի հեռարձակել եւ դրա տեւողությունն ավելացնել:

Անհապաղ գործողություն ձեռնարկելու մասին հանձնարարական

գ) Խրախուսել հունարենով տեղանունների օգտագործումը կամ օբյեկտների անվանակոչումը՝ այդ լեզվի գրությանը եւ ուղղագրությանը համապատասխան:

Հայաստանի իշխանությունների կողմից ձեռնարկված գործնական միջոցառումները

31. Ըստ իշխանությունների՝ հունախոս բնակչություն ունեցող համայնքներում տեղանունները փոխելու առաջարկություն հաշվետու ժամանակահատվածում չի արվել:

Փորձագետների կոմիտեի գնահատումը եւ լրացուցիչ գործողությունների անհրաժեշտությունը

32. Ինչպես արդեն նշվել է (19-րդ կետ), 10.2 (է) հոդվածն իրականացնելու համար անհրաժեշտ է, որ պետական իշխանության մարմինները դրական քայլեր ձեռնարկեն՝ անկախ տեղական իշխանությունների կամ այլ շահագրգիռ կողմերի նախաձեռնությունից:

33. Հետեւաբար Փորձագետների կոմիտեն վերահաստատում է հինգերորդ գնահատման զեկույցում ներկայացված իր այն դիտողությունը, որ «Հայաստանի պետական իշխանության մարմինները [պետք է] դիմեն համապատասխան համայնքներին, խրախուսեն նրանց տեղանուններ ընդունել տեղի ազգային փոքրամասնությունների լեզուներով կամ կրկին ընդունել ոչ վաղ անցյալում կիրառությունից հանված տեղանունները եւ ֆինանսավորման հատուկ ծրագրի

միջոցով աջակցեն այդ միջոցառումների իրականացմանը»[17]:

4. Քրդերեն

Անհապաղ գործողություն ձեռնարկելու մասին հանձնարարական

ա) Նպաստել նախադպրոցական կրթության առնվազն զգալի մասի ապահովմանը քրդերենով եւ տեղեկություններ տրամադրել տարրական եւ միջնակարգ կրթական ծրագրում քրդերենով (քրդերենի) դասավանդման մասին:

Հայաստանի իշխանությունների կողմից ձեռնարկված գործնական միջոցառումները

34. Իշխանությունները հայտնում են, որ ներկայումս ոչ մի երեխա քրդերենով նախադպրոցական կրթություն չի ստանում:

35. 2020-2021 ուսումնական տարում Արագածոտնի մարզի «հանրակրթական դպրոցների» ուսումնական ծրագրի շրջանակներում քրդերեն լեզու եւ գրականություն է սովորել 315 աշակերտ:

Փորձագետների կոմիտեի գնահատումը եւ լրացուցիչ գործողությունների անհրաժեշտությունը

36. 8.1 (ա) (iv) հոդվածով ստանձնած պարտավորությունը կատարելու համար անհրաժեշտ է, որ պետական իշխանության մարմինները, համագործակցելով համապատասխան տեղական իշխանությունների հետ, «նպաստեն եւ (կամ) խրախուսեն» ավանդաբար քրդախոս բնակչությամբ բնակեցված տարբեր համայնքներում, օրինակ՝ Ալագյազ համայնքում (Արագածոտնի մարզ), նախադպրոցական կրթության առնվազն զգալի մասի

[17] Փորձագետների կոմիտեի՝ Հայաստանի վերաբերյալ հինգերորդ գնահատման զեկույց MIN-LANG (2020) 3, 42-րդ կետ:

քրդերենով ապահովմանը: Բացի այդ, պետական իշխանության մարմինները, համագործակցելով տեղական իշխանությունների եւ քրդախոս համայնքի ներկայացուցիչների հետ, պետք է ծնողներին տեղեկացնեն քրդերենով նախադպրոցական կրթության առաջարկի մասին եւ ակտիվորեն խրախուսեն, որ վերջիններս իրենց երեխաներին տանեն համապատասխան մանկապարտեզներ:

37. Պարզ չէ, թե վերոհիշյալ 315 աշակերտներից քանիսն են հաճախել տարրական եւ քանիսը՝ միջնակարգ դպրոց: Փորձագետների կոմիտեն դիմում է իշխանություններին հաջորդ պարբերական զեկույցում կրթության այս մակարդակներից յուրաքանչյուրում աշակերտների թվի վերաբերյալ թարմացված տեղեկություններ տրամադրելու խնդրանքով, որպեսզի կարողանա համապատասխանաբար 8.1 (բ) (iv) եւ 8.1 (գ) (iv) հոդվածների կատարման վերաբերյալ եզրակացություններ անել:

Անհապաղ գործողություն ձեռնարկելու մասին հանձնարարական

բ) Քրդերենով կանոնավոր եւ բավականաչափ երկար տեւողությամբ հանրային հեռուստատեսային հաղորդում հեռարձակել:

Հայաստանի իշխանությունների կողմից ձեռնարկված գործնական միջոցառումները

38. Հայաստանի հանրային հեռուստաընկերությունը նախատեսում է 2022 թվականի մարտ ամսից հեռարձակել ծրագիր քրդերենով (յուրաքանչյուր կիրակի 15 րոպե տեւողությամբ), որը ենթադրաբար կլինի ասորերենով ծրագրի ձեւաչափով (տե՛ս 15-րդ կետը):

Փորձագետների կոմիտեի գնահատումը եւ լրացուցիչ գործողությունների անհրաժեշտությունը

39. Փորձագետների կոմիտեն հղում է կատարում փոքրամասնությունների լեզուներով հեռուստատեսային հաղորդումների կարեւորության վերաբերյալ իր

հիմնական դիտողություններին (տե՛ս 16-րդ կետը): Հետեւաբար վերջինս ողջունում է հանրային հեռուստատեսությամբ քրդերենով ծրագիր սկսելու մտադրությունը, որով անդրադարձ կկատարվի տարբեր թեմաների, այն նախատեսված կլինի բոլոր տարիքային խմբերի համար եւ հասանելի կլինի նաեւ համացանցում: Միեւնույն ժամանակ Փորձագետների կոմիտեն նշում է, որ հեռարձակման համար նախատեսված ընդամենը 15 րոպե տեւողությունը եւ հեռարձակման շաբաթական պարբերականությունը բավարար չեն քրդերենի խթանման գործում արդյունավետ ներդրում ունենալու համար:

40. Հետեւաբար, հաշվի առնելով անհապաղ գործողություն ձեռնարկելու մասին իր հանձնարարականը, Փորձագետների կոմիտեն իշխանություններին առաջարկում է քրդերենով հեռուստահաղորդումն ավելի հաճախակի հեռարձակել եւ դրա տեւողությունն ավելացնել:

Անհապաղ գործողություն ձեռնարկելու մասին հանձնարարական

գ) Խրախուսել քրդերենով տեղանունների օգտագործումը կամ օբյեկտների անվանակոչումը՝ այդ լեզվի գրությանը եւ ուղղագրությանը համապատասխան:

Հայաստանի իշխանությունների կողմից ձեռնարկված գործնական միջոցառումները

41. Ըստ իշխանությունների՝ քրդախոս բնակչություն ունեցող համայնքներում տեղանունները փոխելու առաջարկություն հաշվետու ժամանակահատվածում չի արվել:

Փորձագետների կոմիտեի գնահատումը եւ լրացուցիչ գործողությունների անհրաժեշտությունը

42. Ինչպես արդեն նշվել է (19-րդ կետ), 10.2 (է) հոդվածն իրականացնելու համար անհրաժեշտ է, որ պետական իշխանության մարմինները դրական քայլեր

ձեռնարկեն՝ անկախ տեղական իշխանությունների կամ այլ շահագրգիռ կողմերի նախաձեռնությունից:

43. Հետեւաբար Փորձագետների կոմիտեն վերահաստատում է հինգերորդ գնահատման զեկույցում ներկայացված իր այն դիտողությունը, որ «Հայաստանի պետական իշխանության մարմինները [պետք է] դիմեն համապատասխան համայնքներին, խրախուսեն նրանց տեղանուններ ընդունել տեղի ազգային փոքրամասնությունների լեզուներով կամ կրկին ընդունել ոչ վաղ անցյալում կիրառությունից հանված տեղանունները եւ ֆինանսավորման հատուկ ծրագրի միջոցով աջակցեն այդ միջոցառումների իրականացմանը»[18]:

5. Ռուսերեն

Անհապաղ գործողություն ձեռնարկելու մասին հանձնարարական

ա) Ապահովել, որ ռուսերենին տիրապետողները կարողանան ռուսերենով գրավոր դիմումներ ներկայացնել պետական իշխանության մարմինների տարածքային ստորաբաժանումներ:

Հայաստանի իշխանությունների կողմից ձեռնարկված գործնական միջոցառումները

44. Իշխանությունները նշում են, որ ռուսերենին տիրապետողները կարող են ռուսերենով գրավոր դիմումներ ներկայացնել իշխանություններին: Սակայն տեղեկություններ չկան այն մասին, թե ինչպես են հաղթահարվել 2020 թվականին ռուսախոս համայնքի ներկայացուցիչների կողմից ներկայացված գործնական դժվարությունները:

[18] Փորձագետների կոմիտեի՝ Հայաստանի վերաբերյալ հինգերորդ գնահատման զեկույց MIN-LANG (2020) 3, 42-րդ կետ:

Փորձագետների կոմիտեի գնահատումը եւ լրացուցիչ գործողությունների անհրաժեշտությունը

45. Իշխանությունների տրամադրած տեղեկությունները վերաբերում են ռուսերենով գրավոր դիմումներ ներկայացնելու օրինական հնարավորությանը: Սակայն անհապաղ գործողություն ձեռնարկելու մասին Փորձագետների կոմիտեի հանձնարարականով անդրադարձ է կատարվում օրենսդրության կիրարկման հետ կապված խնդիրներին: Այս ամենը նկատի ունենալով՝ պետական իշխանության մարմիններին առաջարկվում է պետական իշխանության մարմինների տարածքային ստորաբաժանումներ ռուսերենով գրավոր դիմումներ ներկայացնելուն խոչընդոտող գործնական դժվարությունների վերաբերյալ գործնական լուծումներ գտնելու նպատակով խորհրդակցել ռուսախոս համայնքի ներկայացուցիչների հետ:

6. Ուկրաիներեն

Անհապաղ գործողություն ձեռնարկելու մասին հանձնարարական

ա) Ընդլայնել ուկրաինացի փոքրամասնությունների կիրակնօրյա դպրոցին տրամադրվող աջակցությունը, այդ թվում՝ ուկրաիներենով ժամանակակից ուսումնական նյութեր տրամադրելու միջոցով:

Հայաստանի իշխանությունների կողմից ձեռնարկված գործնական միջոցառումները

46. Հայաստանի իշխանությունները նշում են, որ 2021 թվականին ուկրաինացի փոքրամասնությունների կիրակնօրյա դպրոցին հատկացվել է 250 000 դրամ (438 եվրո[19]) պետական դրամաշնորհ: Ավելին, 2020 թվականին իշխանությունները որոշել են ազգային փոքրամասնություններին տարեկան

[19] 2021 թվականի օգոստոսի 24-ի դրությամբ սահմանված արտարժույթի փոխարժեքով:

հատկացվող բյուջեն ավելացնել 5 միլիոն դրամով (8750 եվրո[20]): Այս ծրագրի իրականացումն ընթացքի մեջ է:

Փորձագետների կոմիտեի գնահատումը եւ լրացուցիչ գործողությունների անհրաժեշտությունը

47. Պարզ չէ, թե արդյոք վերոնշյալ 250 000 դրամ դրամաշնորհը կազմել է ուկրաինացի փոքրամասնությունների կիրակնօրյա դպրոցին տրամադրվող աջակցության ավելացված մասը: Սակայն Փորձագետների կոմիտեն նշում է, որ ուկրաինացի փոքրամասնությունները կարող է նաեւ օգտվել ազգային փոքրամասնությունների համար նախատեսված բյուջեի ավելացումից, որից մասնաբաժին կարող է տրամադրվել կիրակնօրյա դպրոցների կողմից կազմակերպվող լեզվի դասընթացներին աջակցելու համար: Ուստի իշխանություններին առաջարկվում է ավելացնել ազգային փոքրամասնություններին հատկացվող բյուջեն:

48. Ինչպես նշվել է հինգերորդ գնահատման զեկույցում, անհրաժեշտ է մշակել ուկրաիներենով ժամանակակից ուսումնական նյութեր եւ ուսուցչի ձեռնարկներ՝ ապահովելով լեզվի որակը եւ նպաստելով սովորողների կողմնորոշմանը (մեթոդներ, համապատասխանեցված նյութեր եւ տեքստեր, աշակերտների կարիքները)[21]: Ժամանակակից մեթոդներով լեզուների դասավանդմանն աջակցելու համար իշխանություններին առաջարկվում է սկսել վերոնշյալ ուսումնական նյութերի մշակման գործընթացը եւ դիտարկել Ուկրաինայից ստացվող ուսումնական նյութերի առնվազն միջանկյալ լիցենզավորման հարցը:

[20] 2021 թվականի օգոստոսի 24-ի դրությամբ սահմանված արտարժույթի փոխարժեքով:
[21] Փորձագետների կոմիտեի՝ Հայաստանի վերաբերյալ հինգերորդ գնահատման զեկույց MIN-LANG (2020) 3, 23-րդ կետ:

7. Եզդիերեն

Անհապաղ գործողություն ձեռնարկելու մասին հանձնարարական

ա) Նպաստել նախադպրոցական կրթության առնվազն զգալի մասի ապահովմանը եզդիերենով եւ տեղեկություններ տրամադրել տարրական կրթական ծրագրում եզդիերենով (եզդիերենի) դասավանդման մասին:

Հայաստանի իշխանությունների կողմից ձեռնարկված գործնական միջոցառումները

49. Իշխանությունները հայտնում են, որ ներկայումս ոչ մի երեխա եզդիերենով նախադպրոցական կրթություն չի ստանում: Այդուհանդերձ, Ալագյազ համայնքում (Արագածոտնի մարզ) նախատեսվում է կառուցել մանկապարտեզ, որտեղ եզդիերենով նախադպրոցական կրթություն կստանան Ալագյազի եւ հարակից վեց եզդիախոս բնակչություն ունեցող համայնքների երեխաները:

50. 2020-2021 ուսումնական տարում Արագածոտնի եւ Արմավիրի մարզերի «հանրակրթական դպրոցների» ուսումնական ծրագրի շրջանակներում եզդիերեն լեզու եւ գրականություն է սովորել 452 աշակերտ: Բացի այդ, Արարատի, Արմավիրի եւ Կոտայքի մարզերում 1412 աշակերտ եզդիերեն սովորել է արտադպրոցական խմբերում:

Փորձագետների կոմիտեի գնահատումը եւ լրացուցիչ գործողությունների անհրաժեշտությունը

51. Փորձագետների կոմիտեն ուրախ է տեղեկանալ, որ եզդիերենը կընդգրկվի նախադպրոցական կրթական ծրագրում: Այն իշխանություններին առաջարկում է հնարավորինս շուտ իրականացնել այս ծրագիրը եւ ապահովել, որ նախադպրոցական կրթության առնվազն զգալի մասը լինի եզդիերեն՝ 8.1 (ա) (iv) հոդվածի համաձայն: Նկատի ունենալով, որ այս պարտավորության իրականացումը պահանջում է իշխանությունների կողմից դրական քայլեր,

պետական իշխանության մարմինները, համագործակցելով տեղական իշխանությունների եւ եզդիախոս համայնքի ներկայացուցիչների հետ, պետք է ծնողներին տեղեկացնեն եզդիերենով նախադպրոցական կրթության առաջարկի մասին եւ ակտիվորեն խրախուսեն, որ վերջիններս իրենց երեխաներին տանեն համապատասխան մանկապարտեզներ: Ավելին, եզդիերենով նախադպրոցական կրթության առնվազն զգալի մասը պետք է հասանելի լինի նաեւ ավանդաբար եզդիախոս բնակչությամբ բնակեցված այլ տարածքներում (Արարատի, Արմավիրի եւ Կոտայքի մարզերում):

52. Ինչ վերաբերում է տարրական եւ միջնակարգ կրթությանը, ապա պարզ չէ, թե վերոնշյալ 452 աշակերտներից քանիսն են հաճախել տարրական եւ քանիսը՝ միջնակարգ դպրոց: Փորձագետների կոմիտեն դիմում է իշխանություններին հաջորդ պարբերական զեկույցում այս մակարդակներից յուրաքանչյուրում աշակերտների թվի վերաբերյալ թարմացված տեղեկություններ տրամադրելու խնդրանքով, որպեսզի կարողանա համապատասխանաբար 8.1 (բ) (iv) եւ 8.1 (գ) (iv) հոդվածների կատարման վերաբերյալ եզրակացություններ անել:

53. 8.1 (բ) (iv) եւ 8.1 (գ) (iv) հոդվածներով պահանջվում է, որ փոքրամասնությունների լեզուն առնվազն դասավանդվի «որպես ուսումնական ծրագրի անբաժանելի մաս»: Հետեւաբար իշխանությունները պետք է քայլեր ձեռնարկեն Արարատի, Արմավիրի եւ Կոտայքի մարզերում եզդիերենի ներկայիս արտադպրոցական ուսուցումը կանոնավոր ուսուցման վերածելու ուղղությամբ՝ որպես ուսումնական ծրագրի անբաժանելի մաս:

Անհապաղ գործողություն ձեռնարկելու մասին հանձնարարական

բ) Եզդիերենով կանոնավոր եւ բավականաչափ երկար տեւողությամբ հանրային հեռուստատեսային հաղորդում հեռարձակել:

Հայաստանի իշխանությունների կողմից ձեռնարկված գործնական միջոցառումները

54. Հայաստանի հանրային հեռուստաընկերությունը նախատեսում է 2022 թվականի մարտ ամսից հեռարձակել ծրագիր եզդիերենով (յուրաքանչյուր կիրակի 15 րոպե տեւողությամբ), որը ենթադրաբար կլինի ասորերենով ծրագրի ձեւաչափով (տե՛ս 15-րդ կետը):

Փորձագետների կոմիտեի գնահատումը եւ լրացուցիչ գործողությունների անհրաժեշտությունը

55. Փորձագետների կոմիտեն հղում է կատարում փոքրամասնությունների լեզուներով հեռուստատեսային հաղորդումների կարեւորության վերաբերյալ իր հիմնական դիտողություններին (տե՛ս 16-րդ կետը): Հետեւաբար վերջինս ողջունում է հանրային հեռուստատեսությամբ եզդիերենով ծրագիր սկսելու մտադրությունը, որով անդրադարձ կկատարվի տարբեր թեմաների, այն նախատեսված կլինի բոլոր տարիքային խմբերի համար եւ հասանելի կլինի նաեւ համացանցում: Միեւնույն ժամանակ Փորձագետների կոմիտեն նշում է, որ հեռարձակման համար նախատեսված ընդամենը 15 րոպե տեւողությունը եւ հեռարձակման շաբաթական պարբերականությունը բավարար չեն եզդիերենի խթանման գործում արդյունավետ ներդրում ունենալու համար:

56. Հետեւաբար, հաշվի առնելով անհապաղ գործողություն ձեռնարկելու մասին իր հանձնարարականը, Փորձագետների կոմիտեն իշխանություններին առաջարկում է եզդիերենով հեռուստահաղորդումն ավելի հաճախակի հեռարձակել եւ դրա տեւողությունն ավելացնել:

Անհապաղ գործողություն ձեռնարկելու մասին հանձնարարական

գ) Խրախուսել եզդիերենով տեղանունների օգտագործումը կամ օբյեկտների անվանակոչումը՝ այդ լեզվի գրությանը եւ ուղղագրությանը համապատասխան:

Հայաստանի իշխանությունների կողմից ձեռնարկված գործնական միջոցառումները

57. Ըստ իշխանությունների՝ եզդիախոս բնակչություն ունեցող համայնքներում տեղանունները փոխելու առաջարկություն հաշվետու ժամանակահատվածում չի արվել:

Փորձագետների կոմիտեի գնահատումը եւ լրացուցիչ գործողությունների անհրաժեշտությունը

58. Ինչպես արդեն նշվել է (19-րդ կետ), 10.2 (է) հոդվածն իրականացնելու համար անհրաժեշտ է, որ պետական իշխանության մարմինները դրական քայլեր ձեռնարկեն՝ անկախ տեղական իշխանությունների կամ այլ շահագրգիռ կողմերի նախաձեռնությունից:

59. Հետեւաբար Փորձագիտական կոմիտեն վերահաստատում է հինգերորդ գնահատման զեկույցում ներկայացված իր այն դիտողությունը, որ «Հայաստանի պետական իշխանության մարմինները [պետք է] դիմեն համապատասխան համայնքներին, խրախուսեն նրանց տեղանուններ ընդունել տեղի ազգային փոքրամասնությունների լեզուներով կամ կրկին ընդունել ոչ վաղ անցյալում կիրառությունից հանված տեղանունները եւ ֆինանսավորման հատուկ ծրագրի միջոցով աջակցեն այդ միջոցառումների իրականացմանը»[22]:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեին ուղղված հաղորդագրություն

Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների վերաբերյալ եվրոպական խարտիայի փորձագետների կոմիտեն, ընդունելով Հայաստանի իշխանությունների ջանքերը Խարտիայի համաձայն ստանձնած իրենց պարտավորությունները կատարելու առնչությամբ, իր հինգերորդ գնահատման զեկույցում (CM(2020)156) ներկայացրել է «անհապաղ գործողություններ

[22] Փորձագետների կոմիտեի՝ Հայաստանի վերաբերյալ հինգերորդ գնահատման զեկույց, MIN-LANG (2020) 3, 42-րդ կետ:

ձեռնարկելու մասին հանձնարարականներ» եւ «լրացուցիչ հանձնարարականներ» այն մասին, թե ինչպես բարելավել Հայաստանում տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների պաշտպանությունն ու խրախուսումը:

Նախարարների կոմիտեի 2018 թվականի նոյեմբերի 28-ի որոշումների (CM/Del/Dec(2018)1330/10.4e) համաձայն՝ Հայաստանը պետք է անհապաղ գործողություններ ձեռնարկելու մասին հանձնարարականների իրականացման վերաբերյալ տրամադրեր տեղեկություններ, որոնցով ներկայացվում են Կողմ պետության կողմից իրականացվող առաջնային միջոցառումները: Այս տեղեկությունները Հայաստանը տրամադրել է 2021 թվականի մայիսի 27-ին: Սույն գնահատման մեջ Փորձագետների կոմիտեն ուսումնասիրել է այդ հանձնարարականների իրականացումը:

Փորձագետների կոմիտեն իր կանոնակարգերով սահմանված կարգով Նախարարների կոմիտեին առաջարկում է՝

1. հաշվի առնել Փորձագետների կոմիտեի՝ Հայաստանի կողմից անհապաղ գործողություններ ձեռնարկելու մասին հանձնարարականների իրականացման վերաբերյալ գնահատականը եւ Հայաստանի իշխանություններին առաջարկում է այն ուղարկել իրավասու պետական իշխանության մարմիններին եւ համապատասխան շահագրգիռ կողմերին.

2. վերահաստատել իր CM/RecChL(2020)6 հանձնարարականը եւ առաջարկում է Հայաստանի իշխանություններին իրենց հաջորդ պարբերական զեկույցը պահանջվող ձեւաչափով ներկայացնել մինչեւ 2024 թվականի մայիսի 1-ը: